



ՏՆՕՐԷՆ-ԽՄԻԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 23

ՀԱՐԱՐ

2 ՓԵՏՐՈՒՄ 1908

ԱՂՋՅԱՑՈՒՄԻ ԵՂՈՒՂՇՈՒՄ

ԶԵՆԻԹ

ԱՂՋՅԱՑՈՒՄԻ ԵՂՈՒՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՖ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոն-Գաղաթ, Օռոգյալ-Պաշտոնական զէմ, թիւ 16

Հատոր 40 փաթա

(1. آساوریان) شرکت مطبوعه مطبعه — باب عالی جاده سنده نومه ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտոն-Այի մասսէսի թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ է անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՐԱՅԻՆ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լուսագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործումը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԺԱՅԻՆ ԿԱՅԺ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|--------|--|
| ԲԵՐԱ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Զարը Պօյու , թիւ 120 . |

Պատահալ երախաւորութիւն

Մասնաձեռնող գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզդուլի տունը:



ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱ.

Թերթ ազգային, գրական եւ քաղաքական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. գաւառներու համար տարեկան 108 դր. վեցամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Զեւքէ վաճառում՝ քաղաք փարա: ԱՐԵՒԵԼՔ հրա լարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խընամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ. ԿԵՐԱՅԻՆ ԿԱՅԺ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Մանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդադին լայնաբեր է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մամուլտիէ Զատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 23

ՇԱՐԱԲ

2 ՓԵՏՐՈՒԱՐ 1908

ՆՊԱՍՏԱԻՈՐ

ՆՊԱՍՏՍ

[Անցեալ տպագրութիւններ]

Չորս տարիներ առաջ, Սկիւտարի բարձունքը, անձրեւոտ գիշեր մը, դարձեալ Տիւրան Տիւրանը «ի պատիւ» ինծի ներկայացնել տուի, և հետեւեալ առտու Սնուկեան Որդի — այն ատենուան Տնօրէնս — ամենայն առատաձեռնութեամբ ֆրանսական ոսկի մը դրաւ ափս — 5 1/2 դրուշ պակաս — և բաւ։

— Ահա՛ բաժինիդ ա՛ս ինկաւ, ասով շաքար առ աէ կե՛ր։

Ասիկա աննպաստ նպաստ էր։

Չորս տարիներ վերջը, անցած չարթու, «ի պատիւ» ինծի դարձեալ Տիւրան-Տիւրանը խաղցուցի և այս անգամ 95 ոսկիէ աւելի ինկաւ գրպանիս, անկէ անցնելու համար ուրիշներու գրպանը անշուշտ։

Ոմանք պիտի երեւակային թէ՛ չորս տարիէ ի վեր յառաջդիմած եմ. — ո՛հ, չեմ կարծեր, տւա՛ղ։

Նո՛յն մարդն եմ, թէեւ չորս տարիներ առաջ, քանի մը խորշոժ նուազ ունէի, ներկայացուցածս միշտ նո՛յն Տիւրան-Տիւրանն էր, դրամի պէտքս միշտ նո՛յնչափ խոշոր էր և միշտ անձնական գերծակ մը ունէի չալակըս՝ որ շարունակ չէր ձանձրանար՝ իր ֆոս... Եօքերը ականջիս խողովակէն պոռալէ։

Բայց, — զի «բայց» մը կայ, — այն ատեն Հանրագիտակի «Կալոօշ»ը չէի և ներկայացուցած խաղս «ի նպաստ» էր և ո՛չ թէ... «ի պատիւ»։

Ահա՛ «ի պատիւ»ին և «ի նպաստ»ին տարբերութիւնը, զոր շատեր դեռ հետաքրքիր են հասկնալու։

«Ի նպաստ»ը լոկ 95 դրուշ կը բերէ, մինչդեռ «ի պատիւ»ը 95 ոսկի։

* * *

Բարեմիտ հանդիսականները, — որոնցմէ իրաւունք չունիմ պահանջելու ընդարձակ գիտութիւն մը՝ թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ քուլիսներէն ներս, — կ'երեւակային թէ դերասանը երբ քսակի անձկութիւն մը ունենայ, անմիջապէս նպաստ մը կը դնէ, որով պիտուէին բացերը կը գոցուին և կամ ... աւելի՛ լայն կը բացուին:

Այսպէս կը խորհի մանիֆաքուրանին, որ միմիայն իր կերպասները ծախել գիտէ կամ ոսկերիչը որ շուկայի իր խցիկին մէջ նստած՝ ոսկիներու կամ մարգարիտներու վրայ աչքի լոյս կը թափէ՝ շուկայիկ սրամտութեանը հեղեղ մը թափելով բերնէն:

Այլ բանն ստանկ չէ՛, աւա՛ղ:

Թատերական կեանքի մեծագոյն կնճռոտ հանգոյցն է նպաստը և դերասանը շա՛տ աւելի դիւրութեամբ կրնայ կեանքը շահիլ, քան թէ նպաստ մը տալ:

Մի՛ կարծէք որ երբ դերասան մը առաջարկէ իր ընկերներուն՝ — «Այս շաբթու ինձի նպաստ մը կը խաղա՞ք», անոնք ալ կը պատասխանեն փութով՝ — «Ինչո՞ւ չէ, ամենայն սիրով, սիրելի՛ս»:

Արքայութեան մէջ թերեւս այս տեսակ բան մը պատահի, բայց ո՛չ երբէք այս աշխարհիս վրայ, ուր դերասանները երկու սերունդ ունին և լեզու մը:

Դերասանը մինչեւ որ յաջողի իր նպաստը տալ, քանի մը անգամներ հոգի կուտայ կ'առնէ, կը մեռնի կ'ողջուննայ, խաչը կ'ելլէ և խաչէն վար կ'իջնէ:

Ընկերի մը նպաստը՝ դերասաններուն աւելնէն աւելի ջիւղերուն դպած բանն է:

— Զէ՛ մի որ անկաւ այս նպաստով փարա վաստկելու դիտաւորութիւն ունի:

Ահա՛ այս մտածումը փորի-ցաւ կը պատճառէ միւսներուն, թէեւ անոր վաստկելիք փարան երբէ՛ք իրենց գրպանէն չպիտի ելլէ, ընդհակառակը թերեւս իրենք ալ մասամբ պիտի նպաստաւորուին ատկէ:

Պիտի պատասխանէք որ թո՛ղ միւսներն ալ նպաստ տան. — լա՛ւ, բայց եթէ իրենք չչափին և եթէ ընկերներն իրենցմէ աւելի չափն ...:

Իրար չբաշխու հիւանդութիւնը դերասաններէ ծնած է կարծեմ՝ գրագէտներու քով վերջանալու համար:

— Մաշաեանը նպաստ տալ կ'ուզէ կոր:

— Ատանկ բան չըլլա՛ր, ես իրմէ աւելի հին դերասան եմ և դեռ նպաստս չտուի:

— Քա՛, ինչո՞ւ ասիկա նպաստ պիտի տայ եղեր, ասդին Զըրզըմպիլեանը կայ, որուն ուղած նպաստը մերթեցինք:

— Մաշաեանը երեկուան տղան է դեռ, փարայի ի՞նչ պէտք ունի, նպաստը ե՛ս տալու եմ, քանի որ նպարավաճառը տասներկու սսկի առնելիք ունի ինէ:

Զըլլա՛ր, նպաստի սովորութիւնը պէտք է վերցնել, դերասանները փարա վաստկելուն պէս խաճաւ կը լռեն, մինչդեռ երբ յաւիտենապէս անկուտի մնան, կրնանք վըստահ ըլլալ որ անոնք աշխատին:

— Ասկէ դատ նպաստի առթիւ ծախուած բացառիկ տոմսակները մեր սովորական ներկայացումներուն կը վնասեն:

— Զըլլա՛ր, Մաշաեանը նպաստ տալու չէ՛...:

— Ասոր անոր փարա վաստկցնելու համար չենք աշխատիր կո՛ր մինք ...:

— Գիտէ՞ք, անգամ մը, 1864ին Սէլանիկ գացած էինք ...:

Ու դերասաններու խօսակցութեան անխուսափելի առանցքը, տպուած անեֆոզ մը, 1864էն մնացած անձնական յիշատակ մը կամ 1820ին պատահած թատերական մանրադէպ մը, ծայր կուտայ՝ վառարանին շուրջը լուսցունել տալով այս թատերաբեմի հերոսները, որոնք խոշոր սղաքներ, մանկիկի նախանձայուղութիւններ ունին մէջերին ...:

* * *

Ասիկա անխուսափելի յառաջաբանն է ամէն դերասանի նպաստին, սկսելով Մոլիէրէն մինչեւ ... Միհրան Կարմիրեան:

Ամէն պարագայի մէջ Մաշաեանը դարձեալ իր նպաստը կուտայ:

Կը վաստկի կամ կը կորսնցնէ, ասիկա իր գիտնալիք բանն է, բայց իր ընկերները աւելի գո՛հ կը մնան, եթէ ա՛յնչափ շատ չչափի:

Այս շաբթուան «Մաշաեան»ը՝ Թօլայեա՛նըն էր, — Սա մեր գիտցած Կալվոսօը, ինչպէս կը սիրէ անուանուիլ — որուն նպաստին ողիսականը պիտի պատմենք ընթերցողներուն:

* * *

— Սմբատ, այս շաբթու իմ «ի պատիւ» է, յայտարարեց կազմուցիւր անբաժան սիրուէ-դին, որուն անունը ըստ ամենայն հաւանա-կանութեան Սմբատ ըլլալու էր:

— Փե՛կ աղէկ, ուրեմն սկսիմ վաղել, պատասխանեց անիկա որ Սմբատ անունին պատասխանած էր:

Սմբատ այն պղտակն ամենաշահեկան դիմն է, որ ամէն տեղ է և ոչ մէկ տեղ միանգամայն, եռաձայնին կը մասնակցի, նուագահանդէսներու և ներկայացումներու տոմակ կը ցրուէ, նուագախումբերու մէջ թմբուկ ու թրօնպօն կը զարնէ, օրուան մար-դերու շուքին մէջ կապրի, վարձու լրագիր-ներու թղթակցութիւն կ'ընէ, անուշահոտու-թիւններու յանձնակատարութեան կը ձեռ-նարկէ, տուններնիդ կ'ապահովագրէ, ձեր փեսացունին կամ հարսնունին մասին ստոյգ տեղեկութիւններ կուտայ ձեզի, դերասան չգտնուած ատենը բեմ ալ կ'ելլէ:

Բայց, Ալփիարէն վերջը, չպիտի համար-ձակէի նկարել սիրուէդը այս տարօրինակ մարդուն, որ միշտ բտրի ու հաճոյակատար, միջոցը կը գտնէ ամէնուն օգտակար ըլլալու և ինէ ձենէ աղէկ տունը նայելէ վերջ ... պզտիկ խնայողութիւններ ալ ընելու:

Սմբատէն զատ ո՞ր մահկանացունին կրնայի դիմել արեւուն տակ, երբ նպատակս ներկա-յացում մը տալ էր:

Շիռակ թատրոն առինք շունչերնիս, ուր վարիէթէի տնօրէնը՝ Սմբատը տեսնելուն պէս կարգ մը յանձնարարութիւններ ըրաւ, որոնց բոլորը խոստացաւ կատարել մեր անմահ դիմը:

— Կիրակի օրուան համար պիտի փափա-քէինք ձեր թատրոնը վարձել:

— 12 ոսկի է:

— Աղէկ ...

— Կանխի՛կ:

— Համով:

Սմբատ ու ես 12 անգամ իրարու երես նայեցանք՝ խորհելու համար թէ ո՛ւրկէ պիտի գտնայինք 12 ոսկին:

— Սմբատ, սըկէ 12 ոսկի փոխ տո՛ւր ինծի, փսփսացի ...:

Սմբատ որ ամէն ինչ կ'ընէ աշխարհիս ե-րեսը, միմիայն այս բանը չի՛ կրնար ընել:

— Ինք մէթալիք ունիմ, պատասխանեց:

Դրան առջեւէն անցնող առաջին բարե-կամիս օձիքին փակայ՝

— Սըկէ 12 ոսկի տուր ինծի, կիրակի օրը կուտամ, նպաստս է:

Չեմ գիտեր խօսքիս մէջ ի՛նչ վստահու-թեան շեշտ կար, որ բարեկամս անմիջապէս կատարեց խնդրանքս, ինչ որ բաւական դար-մանք պատճառեց ինծի, այս դարուն, ուր ամէն մարդ մեղքը իսկ փոխ չի տար ուրիշին:

Ուրիշ անգամ կէս ոսկի փոխ կ'ուզեմ և կը մերժեն:

Թատրոնէն վերջը տպարան, միշտ Սմբա-տը ետեւէն:

— Պ. Արշա՛կ, ծանուցումներս ...

— Կանխի՛կ:

Նորէն հեռաւոր ծանօթի մը դիմելու հար-կադրուեցայ քանի մը ոսկի փոխ առնելու համար:

Ամէն անգամ որ ինէ կանխիկ դրոմ պա-հանջեն, սովորութիւն ունիմ իմ կարգիս ու-րիշէ մը խնդրելու, որպէս զի գրողանիս հետ ուղղակի առնչութիւն մը չունենայ խնդիրը:

Տոմսակները պատրաստ էին և սկսանք՝ ամիսը անգամ մը տնօրէնէք գացող հոռոմ՝ քահանաներու պէս բոլոր Հայ-Ղայֆ դաստ-կարգը անդաստան պտըտիլ:

— Այս շաբթու նպաստս է, կը յուսամ որ ...

— Շատ աղէկ, կուգանք:

Բայց այս պտոյտը քիչ մը խելքիս կը դպէր և յարմար դատեցի Սմբատին ըսել:

— Ինծի նայէ՛, ես այս նպատակէն վաղ անցայ ... սանդուխները ելլելէ իջնելէ յոգ-նեցայ ա՛լ:

— Խալթ մի ուտեր, Աղամեանը պիլէ ասանկ կ'ընէր, պատասխանեց անիկա առանց ժպտելու:

Քանի որ Աղամեան պիլէ ասանկ կ'ընէր, ուրեմն Աղամեանին հետեւիլ կը մնար ինծի... առանց խալթ ուտելու:

— Յառաջիկայ կիրակի, կը սկսէր Սմբատ...

— Ներկայացում մը ունիմ, կ'ամբող-ջացնէի:

Դիմացինը շուարած երեւոյթ մը կ'առնեի երբեմն և փարայէ չեղլելու համար՝

— Ներեցէք, այս շաբթու տիկինս ան-հանգիստ է:

Ուրիշ տեղ մը.

— Շատ կը փափաքինք, բայց չպիտի կըրնանք գալ, սգաւոր ենք:

— Ներեցէ՛ք, բայց այս շաբթու գեղ պիտի ելլենք:

Կամ թէ.

— Տիկինիս հարցունեմ անգամ մը:

Օ՛հ, յաւիտենական էլիքները, որոնք գործադրելով հինցած են ա՛լ ... Սմբատ Դաւթեանի գիրքերուն էլիքներուն նման:

Պիտի ուզէի որ առանց կեղծաւորութեան ըսէին.

— Ինծի նայէ՛, այս շաբթու շատ ծախք ունիմ, չեմ կրնար գալ ...:

Բայց մարդիկ երբէք չեն յօժարիր փառայի պակասին զգացնելու:

* * *

Եօթանասուներկեց հոգինոց նուագախումբ մը խոստացած էի ծանուցումներուս մէջ:

Անոնք որ այս canard-ին նուագեցին, canard à trois bec-ներ ըլլալնին վկայեցին:

Երբ խանութ մը երթանք կօշիկ մը գընելու, կօշկավաճառը կ'ապահովցնէ մեզի թէ տարի մը պիտի դիմանայ այդ կօշիկը, մինչ մէկուկէս ամիսէն չորսդին կը ծակի:

Երբ քանդալօն մը չինել տանք, մեր դերձակը երգում պատառ կ'ըլլայ որ կերպասը հիանալի է, և տասնըհինգ օր չանցնիր՝ ատոր հակառակին համոզուելու համար:

Արդ, շատ կը գտնէք ինծի, երբ 76 հոգինոց նուագախումբ մը խոստանամ ձեզի և ... 6 հոգի միայն ներկայացունեմ ձախակողմեան 7 թուանշանը ջնջելով:

Խորհեցայ որ 76 հոգի պիտի կենար ձեր փափուկ գլուխները արդուկել, որով գլուխ արդուկողներու թիւը նուագեցուցի՝ միշտ ժողովուրդին հաճոյքին համար:

Ամէն պարագայի մէջ 30 հոգիի մօտ էր նուագախումբս փորձին օրը, ուր Սինանեան եկած էր աւաջնորդելու:

Սինանեան իր աթոռը կը նստի և Սմբատ իր թմրուկին առջեւ կ'անցնի:

Եւ փորձը կըսկսի:

Չա՛թ չա՛թ չա՛թ:

Նուագապետին պակէքը նուագախումբը կը կեցնէ՝ so sիեզը so ցաթիւրէլ ընելու համար:

Չա՛թ չա՛թ չա՛թ. — սի պեմօլը սի ցաթիւրէլ է եղեր:

Չա՛թ չա՛թ չա՛թ. — հիմակ ալ քեմբօն չերթար կոր:

Չա՛թ չա՛թ չա՛թ. — թաւ ջուլակահաւրը սխալ ձայնէ մը սկսեր է:

Անա՛ն կոր վերջապէս Սինանեան սրանեղած տետրակը կը գոցէ և կ'առնէ կը քալէ՝ իմ գլխուս ձգելով անճարակ թրածիլէները:

— Սմբատ:

— Թօլա՛:

— Ի՛նչ պիտի ընենք հիմա, կը հարցնեմ յուսահատ:

— Ծօ՛, հոգդ մ'ըներ, ես տիրիօք կ'ընեմ: Ահա՛ քամամ կ'ըլլայ:

* * *

Կիրակի է, լուսնալու մօտ:

Նոյն օրը յիսուն ոսկի տակ փախչելու վախէս ամենեւին չեմ կրցած քնանալ և առջի գիշերուան պարահանդէսէն թռած գոյգ մը տատրակներու բարոյականի դաս կուտամ՝ Մինէրվայի գեղջկային գարեջրատունին անկիւնը, մինչ երկինք տակաւ կը տփգունի:

Սուարէի մը երթալու պատրուակով մայրիկին փէշերուն տակէն փախած դպրոցական աղջիկներ են, որոնք լուսնալու կը սպասեն՝ տուն վերադառնալու համար, երեկոյթ է վերադարձող պարկեշտ աղջիկներու դէմքով:

— Աս ըրածնիդ կը վայլէ՛ ...

Ու կը սկսիմ՝ իբր մեծ աղբարիկ մը՝ կեանքի դասը կարդալ անոնց:

Պիտի խնդաք ըրածիս, ես ալ կը խնդամ:

Բայց, ի՛նչ ընեմ, c'est plus fort que moi !

Ահաւասիկ իբր ա՛յնչափ անբարոյական էակ մը ճանչցուելուս՝ միշտ բարոյականի առաքեալ կը հանդիսանամ ինկած կամ իյնալու մօտ կիներու քով, առանց այս վսեմ գործիս մասին ո եւ է ծանուցում մը հանելու ...:

Ամերիկացի միսիոնարներ Չինաստան կ'երթան՝ առաքելախօսելու, ես պարահանդէսները կը պտըտիմ բարոյականացնելու համար՝ ժամանակակիցներս:

Ուրիշներ որ լարոյալից կ'անուանեն ինքզինքնին, երբ պարահանդէսէն երկու դեռատի աղջիկ տանէին հետերնին երբէ՛ք միտ-

քերնէն չեն անցըներ բարոյականը և անոր յարակից հարկեցուցիչ պարագաները:

Ես սնրարոյականի մակղերին առջեւ կը ժպտիմ, բայց բարոյականի առաքեալ մը կ'ըլլամ միշտ՝ ա'յնպիսի տեղումնք, ուր բարոյալիցները կ'անբարոյանան:

Ասկէ վերջը թո՛ղ զիս անբարոյական անուանող առաջին պատուելին, առաջին քաւրը նետէ երեսիս:

Ես պարահանդէսները կը պտըտիմ ո՛չ թէ զուարճանալու համար, այլ բարոյական սերմանելու համար հոն:

* * *

Ձեմ գիտեր, բայց այն օրէն ի վեր ուր ծանուցուեցաւ թէ կիրակի օր նպաստ ունիմ, կիները միահաղորդ, կիները անշուշտ ... անուշ կը նային կոր երեսիս:

— Բարեւ, Թօլա՛ս ...

Կիներ զորս չեմ ճանչնար, չեմ տեսած, ո՛չ ալ հետեւին խօսած, սիրալոսն ակնարկներ կ'ուղղեն ինծի ...

— Նպաստիս համար ըլլալու է, կը խորհիմ և Պ. Սմբատ իրաւունք կուտայ ինծի:

Պզտիկ բարեւներ, նշանակալից ժպիտներ, աչքերու խորհրդաւոր քթթումներ ...

Եւ ասիկա որովհետեւ շաքաթ մը միայն տեսած ունենալու յոյսը ունիմ, իսկ եթէ ամբողջ տարին դրամ ունենամ, ո՛րչափ աւելի պիտի շեշտուին այդ մոգական քաղձր ակնարկները:

Իրաւունք ունի եղեր մեծ-մայրիկս որ վըսէր:

— Ամէն բան փարայով է այս աշխարհում:

(Մեծ-մայրիկս ռուսահայ էր):

Հապա եթէ փոխանակ շահելու կորսնցնեմ այս շարթու, բոլոր այս քաղցր ակնարկները խուժողով նայուածքներու պիտի վերածուին:

* * *

Ժամը 5ն է:

Թատրոնի կիշէին առջեւ կ'երթամ կուգեամ՝ զսպանակաւորուած մեքենայի մը նման:

«Հայր մեր» մը կը մռլտամ ինքնիրենս և մանկութեանս միջոցին գոց սովորած աղօթքներս միտքէս ... կ'անցընեմ:

Ահա՛ թէ ե՛րբ Աստուծոյ և հաւատքին գիրկը կ'իյնանք մենք՝ ապերախտ նիւթապաշտ մահկանացուներս ամենեցուն:

Թատրոնը կը լեցուի տակաւ. — Աստուած, որ դեռ սատանաներու զթած Աստուածն ալ է միանգամայն, լրած է աղօթքը իր խոնարհ ծառային:

Ձրիններու տողանցումը սարսափեցուցիչ է:

Իւրաքանչիւր թերթի կողմէ քսանական հոգի. — ամէնքն ալ գլխովս վրայ, քանի որ արդէն արահին մէջ ուրիշ տեղ չկայ:

— Այսչափ գրաշար ի՞նչ պիտի ըլլայ, կը հարցնեն ինծի:

— Ասոնք իմ անմահ արձակո՛ւ շարող երանելի մահկանացուներն են. թո՛ղ տուէք որ անցնին:

Ու կ'անցնին խմբագիրներ, գրաշարներ, վարժապետներ, գրողներ, դերասաններ ...

Ներկայացումը կը սկսի. — կը քննադատեն, կը հաւնին, չեն հաւնիր, կը խծբծեն ... բայց նորէն կը ծափեն, կը ծափահարեն:

— Ո՛ւր է Յի՛ս տարու երգիչը, կողոպտուեցանք, կը պօռայ blanc-bee մը, որ ձրիօրէն մտած է ներս:

— Ո՛ւր է, Պ. Շառէտտին Ֆաուսթէն ալ կտոր մը պիտի երգէր, կը ձայնարկէ բառասիւն տղեկ մը՝ որ 5 ղրուշ է տուած:

Թատրաբեմին վրայ.

— Թօլայեա՛ն, ինծի փարա տուր, ես պիտի երթամ:

— Կավո՛ւշ, իմ փարա՛ս:

Ու գրպաններս որ լեցուած էին քիչ առաջ, կը պարպուին, կը պարպուին ...

Ասդին անդին փարա ցրուելէս ճանճրացած՝ թատրոնին ետեւի դռնէն կծիկը կը դնեմ, շաքաթէ մը ի վեր յոգնած, առջի իրիկուընէ ի վեր անքուն, և առտուընէ ի վեր անօթի ...:

Բարեկենդանը ինծի կը սպասէ:

Եւ յետոյ՝ Պրուսայի ջերմուկները:

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ



ՀԻՆ ԷՋԵՐ

ՏԱՆԸ ՄԷՋ

(Շար. եւ վերջ)

Այրը կը սրդողդի, ոտք կելնէ և աղջկանը թեւէն բռնելն ու քաշքշելով բազմոցին վերայ նետելն մէկ կընէ:

— Ի՞նչ կուզես կոր հիմայ աղջիկէս, կը պօռայ կինը յուզուած, թեւը փրցուցիր նէ... վա՛խ ճիշերս ... վա՛խ աղջիկս:

Եւ կերթայ աղջիկը գրկելու:

Գետոյ կը շարունակէ.

— Ի՞նչ խըյանէթ մարդ ես եղեր... թեւը ցաւցուցիր նէ ... ասանկ անգթաբար քաշել կըլլա՞յ մի ... և ի՞նչ յանցանք ըրաւ որ անանկ քաշեցիր, քաշքշեցիր աղջիկս ... մի՛ լար աղջիկս ... մի՛ լար Հայկանոյշս ...:

Մայրը կը յուզուի ... կը ջանայ արտասուքը դապել, բայց չյաջողիր, աչքերը կը թրջուին արտասուքով: Կուրծքին վրայ կը սեղմէ աղջիկը, կը համբուրէ անոր թաց աչքերը, և ձեռքով կը շտկէ մազերն:

— Կնիկ չեն մի, ամէնքն ալ անմիտ են, կըսէ այրը, եթէ չբարկանաս՝ կը բարկանան թէ ինչու չես բարկանար. եթէ բարկանաս՝ կը բարկանան թէ ինչու կը բարկանաս:

— Էրիկ մարդիկ են անմիտները, էրիկ մարդիկ ... տղան յանցանք մը ընէ նէ՝ պատժելու է, կայնած սեղը անանկ ուժով թեւէն կը քաշեն մի ... վա՛խ խուչիկս վա՛խ ...:

— Բանի մը հատ զարկ ըսիր նէ:

— Ըսի նէ՝ ան ատեն զարնելու էիր ... քանի մը հատ զարկ ըսի տէյի զահէր ամէն օր պիտի գայիր ու քանի մը հատ պիտի զարնէիր ...: Գնա բանդ, Աստուածդ սիրես... Հայկանոյշս քեզի կեռաս առնեմ աղջիկս...:

— Ասանկ երես կուտաք ... վերջը ...

— Վա՛խ եավրուս վա՛խ ...:

— Չեն սեպեր նէ ...

— Վա՛խ հրեշտակս, անմեղ գառնուկս...

— Կըսէք որ չեն սեպեր կոր:

— Ծիյէրս, իմին աղուորիկ աղջիկս ... ես աղջկանս աղուոր ֆիստան մը պիտի չեմ, քարէլօ պիտի առնեմ, ըսքարբին պի-

տի առնեմ, մանթօ պիտի ձեւել տամ ... հա՛ա՛ աղջիկս:

— Հա՛ կըսէ Հայկանոյշը:

— Իմ աղուորիկ աղջիկս:

— Հա... հա... հայ... րիկը առնէ...:

Հայրը կզգածուի, կերթայ աղջիկը համբուրելու:

— Անանկ ուժով քաշէ՛, վերջն ալ պագ... հապա թեւը ցաւցունէ՛իր նէ ...:

— Բան մը չեղաւ ա՛... իմ նօնօչիկ աղջիկս:

— Երես մի՛ տար դարձեալ, վա՛խ աղջիկս ... թեւէ՛դ քաշեց հայրդ:

— Դուն ալ կուտաս կոր երես ... գիրկըս եկուր աղջիկս:

— Ես չեմ տար կոր ... իմ աղջիկս խելօք է ... հա՛ աղջիկս ... իմ աղջիկս երես չառնեմ:

— Իմ գիրկս եկուր Հայկանոյշ:

Հայրը կը գրկէ աղջիկը:

Գետոյ.

— Թեւդ ցաւցուցի՞ աղջիկս:

Հայկանոյշ գլուխով կը յայտնէ թէ ոչ:

— Ինչո՞ւ քեւդ ցաւցուցի՞ կըսես ... ասանկ կըթուրթին չտրուիր տղայոց:

— Իրաւունք ունիս ... բայց երես չտալն ալ չըլլար կոր ... ի՞նչ գիտնամ:

— Է՛, հա՛, իրաւունք ունիս ... ես ալ երբեմն երբեմն կուտամ կոր ... բայց աշխատելու է որ ...

— Դպրոցին մէջ կը կըթուր յետոյ:

— Իրաւ է ... տուր ինծի որ մազերը սանտրեմ:

— Մայրիկը, Հայկանոյշիս մազերը սանտրէ նայիմ:

Հայկանոյշ կը հնազանդի, կերթայ իւր մօրն առջեւը կը նստի և թոյլ կուտայ սանտրուիլ մօրմէն:

— Տե՛ս, ի՞նչ խելօք կը նստի իմ աղջիկըս, կըսէ հայրը:

— Իմ աղջիկս դառնուկ է, կաւելցնէ մայրը:

— Քիչ մ'առաջ լացողը, չար Հայկանոյշըն էր:

— Այո՛, ուրիշ Հայկանոյշ մ'էր անիկայ:

— Իմ աղջիկս չլար:

— Ի՞նչ ալ աղուոր կըլլայ կոր:

— Ապրիս աղջիկս, ապրիս ... օրհնեալ է Աստուած, վերջացուցինք խնդիրը ... պարապ տեղ իրարու ծանր խօսքեր ըրինք:

Ինչ ծանր խօսքեր ըրինք, դո՛ւն ալ ... տուն ըլլայ խօսք չըլլայ ... ասանկ բաներ յեաս չունին ... իրարու աչք չհանեցինք ա՛:

— Նախաճաշ պատրաստ է:

— Այո՛, ներսն է:

Այրը կերթայ նախաճաշը կընէ և յետոյ ներս մտնելով:

— Ըսելիք մ'ունի՞ք:

— Ոչ, իրիկունը կողով մը ելակ բեր:

— Լաւ:

Ամուսինը կը մեկնի: Կէս ժամ յետոյ Հայկանոյ ալ իւր վարպետին տունը կերթայ:

Ահաւասիկ, տիկնայ՛ք, տեսարան մը որու վրայ կը ճանչնաք զձեզ ձեր ամուսիններով:

Առանց մանկավարժ ըլլալու երկու երեք դիտողութիւն միայն պիտի ընեմ: Նախ՝ թէ մայրն իւր աղջկեցութիւնը կը կոտրէ իւր զաւկին առջեւ երբ անոր կըսէ:

— Հօրդ պիտի գրուցեմ, հօրդ իմաց պիտի տամ:

Երկրորդ՝ թէ հօրն աղջկեցութիւնը կը տրկարացնէ զաւկին առջեւ երբ զաւկին կըսէ:

— Հօրդ կապաւինիս կոր ... ես հօրմէջ ալ չեմ վախնար, անոր առջեւն ալ կը ծեծեմ քեզի:

Երրորդ՝ թէ հայրն եթէ պատիժ մը չտնօրինէ իւր զաւկին՝ երբ սա պատժոյ մը կըստէր մօրմէն նախապէս ստացած աղբարարութեան համեմատ, տղան սա համոզումը կը գոյացնէ մօրին մէջ թէ կամ մայրը ստախոս է կամ հայրն անկարող է զինքը պատժելու:

Արդ, մայրը, գլխաւոր դատարարն զաւկին, պարտի թեթեւ պատիժներով զսպել և ուղղել իւր զաւակն:

Հայրը զաւկին առջեւ տարաձայն ըլլալու չէ անոր մօրը՝ նոյն իսկ եթէ մայրն անիրաւութեամբ վարուած ըլլալ աղուն դէմ: Այսպէս վարուելու է նաեւ մայրը:

Երես տալու խնդրոյն զաւրով՝ կը յիշեցնեմ ձեզ առական կապիկն որ ձագն խղճեց չափազանց սիրելով և սղմելով:

Հարց ոմանց քոչունն ինձ իմաց տուան ալ մէկդի դնելու է, եթէ չէք ուզեր որ տրդան ձեզի ըսէ օր մը:

— Սուտ կը խօսիս կոր, հայր:

Մեր նախնիք կըսէին:

— Տղան քնացած ժամանակը համբուրելու և սիրելու է:

Նախնիք իրաւունք ունէին:

Ե. Յ. ՊԱՐՈՆՅԱՆ

ՀԻՄԱՅ ՄՕՏԱ Է ...

[ՖԱՆԹԶԻ]

— Եռեսուն տարեկան կիներուն ներմակ մազ ունենալը:

— Հիմակուան դեռասի օրիորդներուն միամիմակ ճամբորդելը:

— Գասը-գիւղցի մասնագիւցներուն պիսիլիք նսիլը (ա՛խ մէյմը սա մօտաին մերիններն ալ վարժուէին):

— Ամսական չորս ոսկի առնող պաշտօնեաներուն *սոփիկ* շինել տալը:

— Շուտով հարսանալու դիտումով պոյն վեր գործի ձեռնարկելը:

— Մեր ժամկոչին քառքով մը Ծնունդի տօնը շնորհաւորելը (որ ըսել է այս տարի 40նոցը իսարէ չ'ըներ):

— Սկիւսարցի օրիորդի մը ցերեկները ֆօքսին հետ ժամանակ անցնելը ու գիշերներն ալ անոր հետ պանիկ ընելը (խըյանէ՛ք...):

— Քահանաներուն զաւակ ունենալը:

— Հարսնցու աղջիկ ունեցող մարդոց Ղալաթիոյ պալատները յաճախելը:

— Կնոջմէն շատ աւելի ֆենիներ սիրելը:

— Դուռ-գափուցի աղջիկներուն ջուրակ, ֆանօն եւ ... *կօֆախիլիկ* զարնելը:

— Եկեղեցւոյ բակին մէջ մանչ-աղջիկ կարգելը:

— Օրուան երեսասարդներուն ամուռ գուլպա հագնիլը:

— Երրորդ կիներ մեռնելէն երկու ամիս յետոյ կրկին ամուսնանալը:

— Փափկասունն նոր հարսի մը «ես կես-րոջս հետ դուրս չեմ ելիր» ըսելը:

— Պոստիկի գարեջրով ճախա ընելը:

— Օրուան աղջիկներուն երեսասարդներն շատ աւելի սրամաքար ասոր անոր հարժ նետելը:

— Սուլու պաշիկներով բացառիկ նուերներ խօստանալը:

— Նմոյս մը դրկեցեմ բաժնեգիրն ընդհուպ կսանաք ըսող զաւառացի կարգ մը բաժանորդներու խոռոհագութիւնը (•••):

Եւ ... այս տեսակ յօդուածներու փանքեղի է ըսելը:

ՆԵՐՇԱՊՈՒՀ

ԺԱՄՈՒ ԹԱՊԱԽՆԵՐԸ

Ա՛խ թապախ, ո՛վ թապախ, էօֆ թապախ:

Ո՛ւր ժամ աղօթք, ո՛ւր թապախ, ո՛ւր մանրուք, ո՛ւր մէթալիք, ո՛ւր պէշլիք, ո՛ւր մենք, ո՛ւր դուն, ա՛ թապախ...:

Մարդ մէրագ ընէ գիտնալու և ստուգելու թէ՛ արդեօք Բրիստոսի ո՛ր թուականին, առաջին անգամ ո՛ւր և որո՞ւ նախաձեռնութեամբ (այսինքն՝ կոտորուելիք ձեռքով) մուտ գտած է եկեղեցիներու մէջ պնակ պտտցնելու տիւններէն սովորութիւնը: Ապահով եմ որ, վաւերական տեղեկութիւններով այս ուսումնասիրութիւնը կատարել յանձն առնող բանասէրը՝ Իգմիրեանց Գրական Յանձնաժողովին Առաջին մրցանակով եւ տէրպապաներուն վականալի կամ լիավակոն անէծքներովը պիտի վարձատրուի:

Գաղափար ունի՞ք արդեօք թէ ի՞նչ տանջանք է պնակ չրջագայեցնելը, «տանջանք» ուզողին եւ տուողին համար հաւասարապէս, մանաւանդ Տաղաւարի օրեր: Պնակը ձեռքըդ կուտան, առջիդ ալ ժամկոչ մը կը տնկեն, ձեռքն ալ — թապախին այսին համեմատ — մոմ մը, և ահա, ափսէով կոլիվա տանելու պէս ճամբայ կ'ելլաս դասէն: Աս՝ յատուկ պնակ է, ան՝ հասարակ, աս՝ Տաղաւարի, ժամարար քահանային, ժամարարութենէ նոր ելող քահանային, ժամարար մտնելիք քահանային, լուսարարին, դռնապանին, գիշերապահին, դպրոցին, աղքատին, էսնաֆին Փրկիչին եւ փառք յաւիտեանս ամէն: Եւ ահա խաթարը ճամբայ կ'ելլէ և ժամկոչ ակապարը իր լալկան ձայնը ձգելով կսկսի տողանցումը. «Շէ՛ն մնաք, շէ՛ն և պայծառ մնաք, ֆիլանին ֆալանին պնակը անտես մի՛ առնէք»: Ճի՛շդ ինչպէս Սինէմ գիւղի աջադուրկ Հաճի Հոռոք ալ չաքաթ իրիկունները փողոցները պտտած աւտեն կը ձայնէ. «Շէ՛ն մնաք, շէ՛ն եւ պայծառ մնաք օղորմածիկներս, նայեցէք օղորմեցէք, երկու աչիչ անկար աղքատ եմ, էրջաւորս կէօրիւնիւր կէօրիւնմէզ խաղաներէն փորձանքներէն պահէք»:

Ա՛լ դործ չունիս նէ՛ աղէն ձախ, ձախէն

աջ, ջաղացքի ձիու պէս՝ նստարաններուն ետուէն առջեւէն, կարանց կողմէն արանց կողմը եւ վիս վեռսա դարձիր ու դարձիր՝ զի՛ Աստուած ընդ մեզ է:

Եւ ի՞նչ տեսարաններ Աստուած իմ, կա՛նանց կողմն ես: Զատուկին մէկը կամացուկ մը իր քովինին.

— Բա՛ կիւլիւզար, տիխաթ ըրէ, սա իքինճի թապախը պտտցունողը էֆտիկին փեսացուն է.

— Բա՛ ան ի՞նչ թօխումի կացած խրոֆած մարդ է եղեր.

— Հա՛ աժա, պանը կիտցող մարդ է կրսն կոր:

Շարք մը անդին, երկու կիներ, տեսնելով պնակներուն իրենց մօտենալը, սրբը աղօթքի մըն է կիյնան և բազկատարած ու բարձրաձայն. «Բա՛ զամենայն զմեզս մեր պարտապանաց դուն մինակ ճար ճարակ ըլլաս...»: քովինը նոյն ձեռով. — «Եթէ ըզշրթունս իմ պանսս, եանի տուն կիտես. մա՛ չալլահ...»:

Երրորդ ժը՝ միեւնոյն նպատակով. «Ի՛նչ նին թախուցին քավեա մեր ամենայն եւ օղորմեա քոյ արարածոս բազմամեղքիս...»: Զորրորդ մը.

— Բա նայէ, տէվէյի քէվրանի պէս եռումով մըն ալ ասդիէն կուգան կոր. «Էվ մի տանիր զմենճ ի փորութիւն, Աստուածամարիկս»: Բա չորս հատ հինգ փարանոց ունէի տակէն մտան վրայէն էլան, վա՛յ միսքիս: Անդին մայր ու աղջիկ մը.

— Բա քուզում մայրիկա, եանի բէք ա՛մօթ պան կըլլայ, քառսուննոց մը տուր տէ՛ Փրկիչին թապախը ձգեմ եռեսուն փարայ ետ առնեմ:

Սակայն օրիորդը քառսուննոցը ամբողջութեամբ պնակը կը ձգէ: Ա՛ռ քեզի տեսարան: Մայրը.

— Բա էրկու լուսդ չի քէօռնայ աղջիկ, Կէլիկէ օլլուին հարսն էիր քի ճախալը մը թէքմիլ խուռուշը թապախը կը ձգես կոր, տունը ժում մը խալուրմացու ունէի՛ վաղը առտու զարգավաթ պիտի առնէի:

Ուրիշ տեսարան. — Բարեպաշտին մէկը!!! խորհրդաւոր կերպով մը ձեռքը կոնաճեւ բռնած և թաթար իջնելու պէս աղ-

մուկոյ, չա՛րխ, պնակին կը դարնէ: Սակայն ո՛վ յուսախաբութեանս, կամ հինգնոց մըն է ձգածը և կամ պօլ քէսէտէն մէթալիկ մը:

Երկու ժեօն ժաններ, կոնանց սիւնօնին մօտերը,

— Սքանչելի էր Ռասինին հոգեբանական վերջին հեղինակութիւնը:

— Իսկ ես այնչափ յափշտակուեցայ Հիւկօի ամիս մը առաջ հրատարակած վէպին վրայ որ, եթէ Բարիդ երթամ, առաջին գործըս պիտի ըլլայ՝ երթալ գտնել այդ անմահ հանձարը և անոր ձեռքերն համբուրել:

Դարձեալ կոնանց կողմն ենք:

— Գուզում ես վրում, սա չէրէկս աւրէ ամա (ապակիի պէս քառորդ մը տալով) սիրիկ փարայ մի տար: Կայնէ ես առնեմ, 2 խուռուշ 100 փարայ ալ՝ 3, չորս հատ ալ տաանոց, քանի՛ ըրաւ, 110 փարա, անանկ չէ՛:

Ա՛լ գործ չունիս նէ ժամերով ոտքի վերայ կեցած, համոզէ որ քառորդը 10 փարայ պակասով կ'աւրուի, թէ՛ 2 զրշ. և 100 ալ՝ 4 ու կէս կ'ընէ և թէ՛ 10 փարայ միայն տուած կըլլայ պնակին:

Եւ սակայն ետեւէդ կը լսես տակաւին հետեւեալ զանգատները:

— Դա վա՛յ մեղքիս, ժամուն մէջը սառափութան էլէր էն, կիւզէիմ չէրէկս խուռուռուլալ հանեցին, հօշ էս տուն երթամ նէ տաքորջս հիսապ ընել կուտամ ա՛: աղօթքս ալ հաւամ ըրին՝ ան ալ քեզի ճապա. — «Պալտպան ամէնիծիր, աչկդ վրայէս պակաս մըներ, ի թըվէ, գիշերը, ցորեկը, շաֆախին և ամէնայնիւ, պարի սահաթով պարի աղօթքով տուն խուլը խուսը տէֆ ընես»:

Էօֆ, լինցաւ: Եւ քրտինքերուն մէջը թաթխուած, կը վերադառնաս Խորհրդարան կամ բանկայը: Ո՛վ յուսախաբութեանս, ո՛վ պարիթ ըլլալիք վաստակ: Հանէ դըրամագլուխդ և ահա «Եւ երկիր էր աներեւոյթ ևւ անպատրաստի»: Գոյացած հասոյթը կամ 15 ու կէս, կամ 18 զրշ. 75 փրյ. և կամ քար ճաթի՝ 25 զրշ, 125 անգամ հոգի մարմին ճգակտոր ելլելէ վերջը:

Հետեւապէս, ես առաջին փափաքողներէն եմ որ, ամէն թաղ. Խորհուրդ, մի անգամ ընդ միւր վերցնէ թապախի անտեղի ու տաղտկալի դրութիւնը՝ տարբեր ձեւով մը փոխարինելով ժողովուրդէն հասոյթի այս աղբիւրը: Եւ ես իմ բովանդակ Տիգրիկեանութեամբս առաջինը պիտի ըլլամ ծախահարող:

Տ Ի Շ Լ Է Կ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Գամելիազարդ Տիկինը ... — Ժամացոյց մը պահառ ... ամուսնալուծման. — Կիմ մը որ սարսիմակ պահանջուներ կուներայ. — Կիմ մը որ անպահառ ժամացոյցի պէտք ունի:

~~~~~

— Ամէ՛ն շաբթո՛ւ կըսեն բարեկամներս,

— Այո ամէ՛ն շաբթու կըսեմ, չարաչար պիտի գործածեմ Հանրագիտակի էջերը և...

— Եւ նիւթերդ անշուշտ օրաթերթերէն պիտի քաղես,

— Ո՛չ միշտ, քիչ անգամ այո, շատ անգամ ո՛չ, և այսօր պիտի տեսնէք որ ի՞նչ սիրուն անակնկալներ կան քրոնիկիս մէջ:

×

Լուրը Պանորմայէն կը հասնի, ուր մեծ պատրաստութիւններ կը տեսնեն վարժարանին մէջ ներկայացնելու համար Գամելիազարդ Տիկինը թուրքերէն լեզուաւ՝ մէկ երկու շաբթէն. — ասիկա բնական բան մըն է: Բայց անբնականը եթէ կուզէք իմանալ, սա է որ՝ առ ի չգոյէ Մառկոնի Կօքիէի, պարոն մը որ հաւանական է թէ կամ պէիս չունի և կամ քիչ մը, Գամելիազարդ Տիկինը դերը պիտի ներկայացնէ: Խեղճ Կօքիէ, Սառա Պէռնաուէ մը ետք՝ միւսիւ մ'ալ քու դերդ պիտի կատարէ:

Եւ սակայն ի՞նչ ընեն խեղճ Պանորմացիները:

(Անշուշտ մեր թղթակիցը պիտի հաղորդէ ներկայացման մանրամասնութիւնները):

×

Շատ բաներ պատճառ կրնան ըլլալ ամուսնալուծման, բայց ժամացոյց մը... երբէք, գէթ ես լսած չէի, թերեւս դուք ալ լսած չէիք, արդ լսեցէք քանի որ Իիսաղ կը պատմէ ձեզ:

Կաղանդէն վեց ամիս առաջ ամուսնացած էին:

Անկէ առաջ ամիսներով նշանած մնացած էին և իրար լաւ մը ճանչցած:

Բնական է նշանածութիւնը անուշ կըլայ և ամուսնութիւնն ալ մեղք... ալուսին:

Բայց եկուր տես որ ամուսնութենէն ետք մեզրը կամաց կամաց կը հասնի:

Տիկինը կ'աղաչէ իր ամուսինին որ իրեն  
ժամացոյց մը բերէ:

Բայց մոռցանք ըսելու, ներեցէ՛ք:

Կը բնակին Սամաթիայէ կէս ժամ հեռու,  
ամուսինը պարկեշտ մարդ մը, որ ժամա-  
գործի մը քով չորս մէճիտ շաքաթականով  
կ'աշխատի:

Պիւտնէնին ծարր ծարին:

Տիկինը երկու ամիս առաջ կ'աղաչէ.

Տիկինը ամիս մը հոգ կը խնդրէ:

